

ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանին
ՀՀ ք. Երեւան, 0010, Վաղարշ Վաղարշյան փ., 13Ա

Պատճենները՝

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին

ՀՀ, Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար
Վահրամ Դումանյանին

ՀՀ, Երեւան, Վազգեն Սարգսյան փ., 3, Կառավարական տուն 2

Շիրակի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահ,

ՀՀ քաղաքացի Լեւոն Բարսեղյանից

Հասցե. Հայաստան, Գյումրի, Պուշկինի փ., 96

Հեռախոս. 091 821363; էլ. հասցե. levon@asparez.am

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ-2/2020

Թվագրված՝ 02 փետրվարի, 2022 թ.

Հարգելի պարոն Խաչատրյան,

Ինչպես Ձեզ հայտնի է, 2018 թվականի հոկտեմբերի դրությամբ Շիրակի պետական համալսարանին առնչվող մի շարք քրեական գործեր էին հարուցված: Իմ տեղեկություններով՝ զգալի վնաս է հասցվել համալսարանին: Ես մի քանի անգամ Ձեզ հայտնել եմ խոր մտահոգությունս այդ գործերի չափազանց դանդաղ եւ անարդյունավետ քննության կապակցությամբ: Առայժմ, որեւէ տեսանելի տեղաշարժ չեմ նկատում այդ գործերի քննության մասով: Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից եւ առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով եւ Շիրակի պետական համալսարանում (ՇՊՀ) առաջացած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, խնդրում եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները:

1. «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին առնչվող ի՞նչ քրեական գործեր են հարուցված 2016 թվականից ի վեր: Խնդրում եմ տրամադրել այդ գործերի հարուցման ամիս-ամսաթվերը, տարեթվերը եւ համարները:

2. Ի՞նչ հիմքերով են հարուցվել այդ գործերը, ովքե՞ր են ներգրավված այդ գործերով որպես մեղադրյալ եւ որպես կասկածյալ: Խնդրում եմ տեղեկությունները տրամադրել գործ առ գործ:

3. Ի՞նչ փուլում է գտնվում այդ գործերի քննությունը:

4. Ո՞վ կամ ովքե՞ր կամ ի՞նչ իրավաբանական անձինք են ճանաչվել այդ գործերով որպես տուժող կամ տուժողներ:

Հնարավորության դեպքերում խնդրում եմ հարցրածս տեղեկությունները տրամադրել ինձ էլեկտրոնային տարբերակով, դրանք ուղարկելով իմ levon@asparez.am հասցեին:

Հարգանք՝ Լեւոն Բարսեղյան, ՇՊՀ ՀԽ նախագահ

